

անոր յաջորդն Էր՝ Նոյն համալսարանին մէջ:

Անգլիայէն դուրս, այս ուղղութեան մէջ նշանաւոր դարձան.- Ամերիկայի Միացեալ Նահանգներէն՝ **Ջ. Ռ. Սըրլ** (John Rogers Searle, *1932 թ.) եւ Գերմանիայէն՝ **Է. Տուգենդհատ** (Ernst Tugendhat, *1930 թ.), որ սկիզբը հետեւորդ մը եղած Էր Հուստելի եւ Հայդեգէրի երեւութաբանութեան ապա հռչակաւոր դարձաւ՝ վերլուծական փիլիսոփայութեան ոլորտի մէջ:

Տուգենդհատ, բարոյագիտութեան առնչուած գրած է.- «*Երեք դասախօսութիւններ, բարոյագիտութեան հարցերու շուրջ*» („Drei Vorlesungen über Probleme der Ethik“, 1981 թ.): Որոշ փոփոխութիւններով, 1993 թուականին հրատարակած է բարոյագիտական դասախօսութիւններու Նոր շարք մը:

Վերլուծական փիլիսոփայութեան ոլորտի մէջ կը զարգանայ *վերլուծական բարոյագիտութիւն*⁽⁴⁶⁾ (Analytic Ethics) մը, որուն մասին հետագային պիտի անդադանամ:

7. ԿԱՌՈՒՑԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Կառուցապաշտութիւնը (Structuralism), ժամանակակից գիտական դրութիւններու ուղղութիւն մըն է, որու Նախահայրը կը նկատուի գուիցերիացի լեզուաբան **Ֆ. Սոսիլը** (Ferdinand de Saussures, 1857 – 1913 թ.), որ յետ-մահու հրատարակուած իր լեզուաբանական գիրքին մէջ կը պահանջէ, որ լեզուն նկատուի որպէս «նշաններու դրութիւն» մը եւ հեռանալով աւանդական մեկ-նաբանութենէն, միայն քննարկուին անոր ընդհանուր կառոյցը եւ նշաններու փոխ-յարաբերութիւնը: Այս նշաններու դրութեան մէջ թէեւ կը զանազանուին *նշանի* արտաքին ձեւը (ֆրնս.՝ Signifiant, գերմ.՝ Signifikant, անգլ.՝ Significant) եւ *նշանի* բովանդակութիւնը (ֆրնս.՝ Signifié, գերմ.՝ Signifikat), սակայն **Ֆ. Սոսիլը**ի համաձայն, անոնց սերտ փոխ-յարաբերութիւնը նման է լեզուական դրութեան մը կամ *լեզուի* (ֆրնս.՝ la langue) ու անհատներու *խօսքի* (ֆրնս.՝ la parole) յարաբերութեան: Այս իմաստով, լեզուն, որպէս կառոյց (Structure) իր կատարելութիւնը կը գտնէ միայն խօսողներու ամբողջականութեան մէջ:

Լեզուաբանական ոլորտի մէջ ծագում առած *կառուցապաշտութիւնը* (կառոյց = Structure եզրէն), հետագային մուտք պիտի գործէր բազմաթիւ այլ մարզերու մէջ, ինչպէս ազգաբանութիւն, գրականագիտութիւն, հոգեբանութիւն, պատմաբանութիւն, ընկերաբանութիւն, եւ այլն:

Կառուցապաշտութիւնը «մաս»երէն աւելի Նախապատուութիւն կու տայ «ամբողջին» եւ կը փորձէ երեւոյթները որպէս կառոյցներ ըմբռնել: Կառոյցները, ձեւականօրէն (Formal), առանց բովանդակութիւնը նկատի առնելու, կը կազմակերպեն իրականութիւնը:

1950-ական թուականներուն փիլիսոփայական այս ուղղութիւնը կը զար-

(46) **Վերլուծական բարոյագիտութիւն** (Analytic Ethics) բարոյագիտական ուղղութեան մասին, տե՛ս Մաս – 2, Էջ 122: